ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-02

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 2 նիստի

8-ը հունվարի 2026թ.

Ժամը 16:30

Ս.թ. հունվարի 8-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2-րդ նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի փաստաթղթային փուլի ստացված հայտերի ուսումնասիրություն

Խորհրդի հինգ անդամներից նիստին մասնակցում էին երեքը՝ Արուսյակ Ջուլհակյանը, Անդրանիկ Եղոյանը և Հարութ Ակլունցը:
Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Հովհաննես Յուքինյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Ա.Ջուլհակյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար հավակնորդների փաստաթղթերը, որը տրամադրվել էր մրցութային խորհրդին: Մրցույթի համար դիմել են չորս հավակնորդ: Խորհուրդը ուսումնասիրեց հավակնորդներ Կարեն Հակոբյանի, Սուրեն Բաբայանի, Եփրեմ Կարապետյանի և Արկադի Մանուկյանի հայտերը, և արձնագրեց, որ Սուրեն Բաբայանի և Արկադի Մանուկյանի ներկայացրած փաստաթղթերն ամբողջական են, Եփրեմ Կարապետյանի ներկայացրած փաթեթում բացակայում է բժշկական փաստաթղթերից մեկը, իսկ Կարեն Հակոբյանի ներկայացրած փաթեթում առկա է միայն դիմումը:
	Խորհուրդը հանձնարարեց ԱԺ աշխատակազմին ծանուցել Կարեն Հակոբյանին և Եփրեմ Կարապետյանին բացակայող փաստաթղթերի մասին և առաջարկել լրացնել անհրաժեշտ փաստաթղթերը մինչև սույն թվականի հունվարի 13-ը, ժամը 18:00 ներառյալ:

Նիստը վարող՝ Ա.Զուլիակյան

Նիստի քարտուղար՝ Հ. Յուքինյան